

րի՝ Կ.Ռեննեի, Ն.Կորկունովի, Ե.Պաշուկանիսի, Տ.Պարսոնի և այլոց դիրքորոշմանը իրավունքի գործառույթների վերաբերյալ:

Բանալի բառեր-իրավունք, իրավունքի գործառույթներ, օբյեկտիվ իրավունք, պոզիտիվ իրավունք, սոցիալական գործառույթներ, սոցիալական իրավունք, իրավունքի կարգավորիչ և կազմակերպչական գործառույթներ:

FUNCTIONS OF LAW: THE ORIGIN AND DEVELOPMENT

Khachatur Balasanyan

*PhD student of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

This article discusses issues of accrual and development of the concept of the functions of law in the historical context. The author provides a thorough analysis of the content of the functions of law in the context of the historical development, as well as explore the basic functions of the right approach to the modern theory of functions of law. As part of the topic a special place is given to approaches known jurists (K.Rene, N.Korkunova, E. Pashukanis, and others) to the functions of law.

Key words: law, functions of law, objective right, positive rights, social functions, social rights, regulative and organization functions.

ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Սոփիեդդին Սոհամմադի

*ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի
և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ*

Մուսուլմանական իրավագիտության դպրոցները ձևավորվել են VIII-IX դարերում: Այսպես VIII դարում ձևավորվեց մուսուլմանական առաջին իրավագիտության դպրոցը՝ մազհաբը (արաբերենից թարգմ. հոսանք, ուղղություն), որի հիմնադիրն էր Աբու Հանիֆան (696-767թթ.): Նա պարսկական ծագում ուներ և գործել է Իրաքում: Հանիֆիների դպրոցը հայտնի էր իր ճկունությամբ և տրամաբանական ինքնուրույն եզրահանգումներով: Այս ճկունությունը պատճառ դար-

ձավ, որ հանիֆիական իրավագետները՝ թե՛ վաղ միջնադարում, թե՛ ոչ միջնադարում գերիշխող դիրք գրավեն մահմեդական իրավական աշխարհում:

Մուսուլմանական իրավագիտության երկրորդ մալիքիական դպրոցի հիմնադիր՝ Մալիք իբն Անաս (վախճ. 795թ.) անունով: Վերջինս հայտնի է իր Սուաթթա (հարթ ուղի) կոչված ժողովածոով²: Նա և իր համախոհների հետ տրամաբանական եզրահանգումներին քիչ տեղ էին տալիս և հայտնի էին իրենց ավանդական պահպանողականությամբ:

Միրիայում և Եգիպտոսում է գործել մուսուլմանական իրավագիտության երրորդ դպրոցը՝ շաֆիական, որի հիմնադիրն էր Իմամ աշ Շաֆիին (մեռ. 820): Իմամ աշ-Շաֆիին ամենամեծ գիտնականն ու համակարգողն էր իսլամի վաղ շրջանում, մի մարդ, որը Մուհամմադից և Ումարից թողեց իսլամի և մուսուլմանական իրավունքի պատմության մեջ³: Պատահական չէ, որ Իմամ աշ-Շաֆիին՝ իսլամի վաղշրջանի առաջին մտավորականին, պետք է եգիպտական ֆալլահիներ մեծարեք որպես հայտնի սուրբ: Նա կազմալուծվող իսլամական պետության միասնությանը նպաստեց ավելի, քան իր ժամանակակիցներից որևէ մեկը: Աշ-Շաֆիին հաջողություն չունեցավ համախմբվածության հասնելու քաղաքական առումով, և դա նրա նպատակն էլ չէր: Արաբների գրաված նոր ընդարձակ տարածքներին հատուկ աշխարհաքաղաքական լարվածությունը անիրագործելի երազանք էր դարձնում կենտրոնացված քաղաքական վերահսկողությամբ իսլամական պետություն ունենալը: Բայց նա զարգացրեց մի բան, որն, ի վերջո, կունենար ավելի մեծ դիմացկունություն, քան արաբական կայսրությունը: Դա ֆիքհի գիտությունն էր (բառացի՝ «հասկացություն») կամ կրոնական իրավագիտությունը, որի միջոցով մարգարեի ուսմունքից առաջացած մի ամբողջ շարք սովորույթներ և սովորություններ, արաբական և նոր նվաճված ժողովուրդների սովորույթներ, կարող էին միավորվել օրենքի ընդգրկուն համակարգի մեջ, որը կառավարում էր

²Շանիֆիների մեջ նշանավոր էին՝ ԱբուՅուսուֆը (վախճ.795), որը Հադանալ Ռալիդի համար գրել«Հարկամատյան» (Քիթաբալ խաֆաջ) գիրքը, Շայբանին (վախճ.804), Գուրուրին (վախճ.1036), Հալաֆին (վախճ.1549):

²St. u Schacht J., *Malik ibn Anas*. Shorter Encyclopaedia of Islam, p.320-324:

³Մանրամասն տե՛ս Muhammedanisches Rechnach Schafitischer Lehre, von E.Sachau, Stuttgart und Berlin, 1897.

մահմեդականների ամենօրյա կյանքը: Շաֆիի մշակած սկզբունքներով շարիաթի համակարգմամբ է պայմանավորված ժամանակակից մահմեդականների շիթի և սուննիի հասարակական ինքնությունն ու այն աշխարհում գտնվելու զգացումը: Այս համակարգը, որի գլխավոր նախագծողը համարվում էր Շաֆիին, վերածվեց շարիաթի կամ իսլամի աստվածային օրենքի:

Շաֆիի կողմից իրավական համակարգի մշակմանը զուգընթաց՝ տարբերակում առաջացավ երկու այնպիսի գլխավոր տերմինների միջև, ինչպիսիք էին շարիաթը և ֆիքհը: Թեև այժմ շարիաթն օգտագործվում է իբրև իսլամական օրենքը բոլոր տեսանկյուններից ընդգրկող ընդհանուր տերմին, այն ունի-ավելի կոնկրետ Աստծո տված ճանապարհի աստվածայինին և հավերժականին վերաբերող գործածություն:

Աշխարհիկ տերմիններով շարիաթը բնութագրվում է որպես «ուսուլյիա», որը մասնակիորեն ոգեշնչում է ֆիքհին՝ օրենսդրության մի բնագավառ, շատ որոշակի ձևերով, որոնք բազմազան են և բաց բոլորի համար: Եթե շարիաթը հավիտենական և աստվածային է, ապա ֆիքհը. որը նշանակում է հասկացություն, զուտ մարդկային կառույց է: Քանի որ ենթադրվում է, որ Աստծո օրենքը միշտ բացահայտվել է Ղուրանում և Սուննայում, ապա ֆիքհը վերաբերում է այնպիսի բան գիտենալուն, որի գոյությունը արդեն ընդունվել է: Այն հարցը, թե ինչպես է իրականում գործում աստվածային օրենքը, ավելին է, քան դատական օրենքի և մարդասիրական օրենսդրության վրա հիմնված իրավագիտության զարգացման հարցը: «Օրենքի մանրամասները մշակելու հատուկ նորմեր հաստատելը, հայտնությունը վկայակոչելը, դրանք բացահայտելը կամ վիճարկելը օրենքի մասին գրքեր կամ տրակտատներ գրելու բոլոր ջանքերը ֆիքհի օրինակներ են: Այդ բառը նշանակում է մարդկային և հատկապես գիտական գործունեություն... Ֆիքհով զբաղվողների՝ ֆաքիհների նպատակն է հայտնաբերել և շարիաթին հաղորդել արտահայտչականություն»:

Շաֆիին վերագրվող ֆիքհի գիտության հիմքերը հիմնված էին չորս արմատի (ուսուլի) վրա՝ Ղուրան, մարգարեի Սուննան, հասարակության համերաշխություն (իջմա) և համանման բանականություն (դիյաս): Տեսականորեն, Ղուրանը գերիշխում էր իրավական արմատների վրա: Գործնականում, քանի որ աստվածային տեքստը պահանջում էր հաղիսի մեկնաբանություն, Սուննան Ղուրանի հետ հավա-

սար դիրք էր գրավում և, որոշ դեպքերում, գերազանցում էր վերջինիս: Շաֆիի համար Ղուրանը և Սուննան օրենքի հարցում վերջնական, անվիճելի հեղինակություն էին: «Այն, ինչ հիմնված է Ղուրանի վրա և միաձայն ընդունված է Սուննայով,- գրում է նա Ռիսալայում, - ճշմարիտ է և 'արտաքին, և 'ներքին աշխարհի համար (ֆիալ-գահիր-վալ-բաթին)»: Շաֆիական ուղղության մեջ նշանավոր էր նաև Մավարդին (974-1018), որը հայտնի է իր «Կառավարման կանոնները» (ալ-Անքամ ալ-Մուլթանիյա) աշխատությամբ⁴:

Մուսուլմանական իրավագիտության չորրորդ դպրոցը՝ հանբալիները, որի հիմնադիրն էր իբն Հանբալը (վախճ. 855թ.): Նա հանդես է եկել որպես հադիսների անվերապահ կողմնակից և տրամաբանական եզրահանգումների հակառակորդ⁵:

XI դարում վերջնականապես կազմավորվում է իջման (մուսուլմանական իրավագետների ընդհանուր համաձայնեցված կարծիքը, շարիաթի դոգման) և դադարում է, այսպես կոչված, «բացարձակի ջիհադը»՝ Ղուրանի և Սուննայի ուղղակի մեկնաբանման և մուսուլմանական իրավունքի հիմնական մեկնությունների ստեղծման դարաշրջանը: XI դարից սկսվում է, այսպես կոչված, «թաքլիդի» արդեն իսկ ձևավորված ավանդույթների ու իջմայի դոգմաների հիման վրա շարիաթի գործողության ժամանակաշրջանը: Այդ ժամանակահատվածից սկսած՝ իրավունք է ճանաչվում միայն այն, ինչն ընդունվել և հավանության է արժանացել իջմայի կողմից:

Սակայն մուսուլմանական իրավական ուսմունքի և, դրա հետ միասին, շարիաթի նորմերի զարգացումը շարունակվեց նաև հետագա դարերում: Այդ զարգացմանը նպաստեց շարիաթի դրույթների մեկնաբանումն ու կիրառումը «պայմանների, տեղի և ժամանակի» հաշվառմամբ: Նման մոտեցման շնորհիվ՝ վարդապետությամբ թույլատրվեց իսլամին չհակասող սովորույթների, կողմերի համաձայնությունների, վարչական կանոնակարգերի կիրառումը: Չնայած այդ իրավական ձևերը մնում են մուսուլմանական իրավունքի բուն համակարգից դուրս, սակայն դրան հաղորդում են մեծ ճկունություն և տարբեր պայմաններին հարմարվողականություն ու հնարավորություն են ընձեռում բացերը լրացնելու համար:

⁴Մանրամասն տե՛ս *Mavedii Constitutions Politicæ*. Bonn, 1853.

⁵Տե՛ս *Coulson N.A. History of Islamic Law*. Edinburgh. 1964, էջ 163-164. *Blanc F. Ledroit musulman*. P., 1995, p. 114-115:

Համաձայն իսլամի պետական իշխանությունը ոչ թե իրավունքի (շարիաթի) տերն է, այլ ծառան, ուստի և չի կարող իր օրենսդրության միջոցով փոխել շարիաթն ու ստեղծել նոր իրավունք: Սակայն նա պարտավոր է հետևել շարիաթի պահանջների պահպանմանը և հասարակական կարգի պաշտպանության նպատակներով կարող է ընդունել համապատասխան որոշումներ ու ակտեր: Այսպես, համաձայն Իրանի Իսլամական Հանրապետության 1979 թվականի Սահմանադրության, ամբողջ օրենսդրությունը պետք է համապատասխանի ավանդական շարիաթի պահանջներին, իսկ 1981 թվականի քրեական իրավունքի հարցերը կարգավորող օրենքը վերադասարանվում է շարիաթի պահանջները:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մուսուլմանական իրավունքի ուսումնասիրությունը շարունակում է մնալ ժամանակակից իրավագիտության արդիական խնդիրներից մեկը: Մասնավորապես, կրոնի և իրավունքի տարանջատումն իր ուրույն ազդեցությունն է թողնել մուսուլմանական իրավունքի ձևավորման և զարգացման վրա: Արդի իրավաբան-գիտականները ավելի հաճախ են իրենց ուշադրությունը սևեռում այն փաստին, որ իսլամում ճանաչվում են մարդու իրավունքների վերաբերյալ ժամանակակից հայեցակարգը: Սույն հոդվածում հանգամանորեն քննարկվում են մուսուլմանական իրավագիտության դպրոցների ձևավորման և զարգացման հիմնախնդիրները: Մասնավորապես, վերլուծության են ենթարկվել Ղուրանի, մարգարեի Մուննայի և իջմայի միջև տարբերությունները, ինչպես նաև ներկայացվում է շարիաթի առանձնահատկությունները: Հոդվածի հեղինակը կարևորվում է մուսուլմանական իրավունքի զարգացման խնդիրը:

Բանալի բառեր–իրավագիտություն, դպրոց, մազխաբ, մուսուլմանական իրավունք, շարիաթ, Ղուրան, Մուննա, իջմա:

Мохиеддин Мохаммади

*Аспирант Института философии, социологии и
права НАН РА*

РЕЗЮМЕ

Исследование мусульманского права остается одним из актуальных проблем современной юриспруденции. В частности, разграничение права и религии, оставило свой особый след на формировании и развитии мусульманского права. Современные ученые-юристы все чаще обращают внимание на то, что в исламе признается современная концепция прав человека. В данной научной статье основополагающим образом рассматриваются проблемы формирования и развития школ мусульманского права. В частности, анализируется разница между Кораном, Сунной и иджмой, а также представлены особенности шариата. Автор статьи считает важным развитие мусульманского права.

Ключевые слова: правоведение, школа, мазхаб, мусульманское право, шариат, Коран, Сунна, иджма.

SCHOOLS OF ISLAMIC LAW

Mohieddin Mohammadi

*PhD student of the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA*

SUMMARY

The study of Islamic law remains one of the urgent problems of modern jurisprudence. Particularly, the difference between law and religion has left its distinctive mark on the formation and development of Islamic law. Therefore, modern legal scholars are increasingly paying attention to the fact that Islam recognizes the modern concept of human rights. The problems of formation and development of the schools of Islamic law are considered in a fundamental way in this scientific article. Specifically, the author analyzes the difference between the Koran, the Sunnah and idjma. The author also presents features of the Sharia. and attaches special importance to the development of Muslim law.

Key words: jurisprudence, school, law, Muslim law, Sharia law, Koran, Sunnah, idjma.